**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 սեպտեմբերի 1997թ. N12

քաղ. Երևան

**Էլեկտրական և ջերմային էներգիայի ու բնական գազի ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին մինչև լիցենզավորման համակարգի ներդրումը գործունեությունը շարունակելու թույլ տալու մասին**

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48 հոդվածով և ելնելով էներգասպառողների անխափան էներգամատակարարումն ապահովելու անհրաժեշտությունից՝

Թույլատրել բոլոր էլեկտրական էներգիա արտադրող, ներկրող, հաղորդող, արտահանող և բաշխող, ջերմային էներգիա արտադրող, փոխադրող և բաշխող և բնական գազ ներկրող, փոխադրող և բաշխող տնտեսավարող ձեռնարկություններին՝ անկախ սեփականության ձևից, շարունակել իրենց գործունեությունը ներկայումս գործող կարգով՝ մինչև հանձնաժողովի կողմից կազմված ժամանակացույցով և սահմանված կարգով լիցենզավորման համակարգի ներդրումը:

**ՀՀ էներգետիկայի**
**հանձնաժողովի փոխնախագահ՝** **Ն. Գրիգորյան**